

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՄԱՐԻՆԵ ԳԱԳԻԿԻ ՀՈՎԱԵԹՅԱՆ

**ՖՐԱՆՍԵՐԵՆՈՎ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ՄԵԽԱՆԻՋՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ**

ԺԳ. 00.02- «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա
(ֆրանսերեն լեզու)» մասնագիտությամբ մանկավարժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Գ. Աստվածատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բ. Մ. Եսաջանյան

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Ե. Արշակյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. հունիսի 19-ին, ժամը 14:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. մայիսի 19-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
մանկավարժական
գիտությունների թեկնածու, դոցենտ



Ա. Յ. Սվաջյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻՎԱՆՈՒԹՅՈՒՆ. Մեր երկրում տեղի ունեցող քաղաքական, հասարակաման, տնտեսական, տեխնիկական, մշակութային և այլ փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն են թողնում կրթական համակարգի վրա: Այսօր օտար լեզուների ուսուցումը դարձել է կյանքի պահանջ, քանզի օտար լեզուների իմացությունը նպաստում է անձի հաղորդակցվելու կարողությունների զարգացմանը, միջմշակութային փոխըմբռնմանը, այլ մշակույթների արժեքների ընկալմանն ու զնահատմանը: Ուսումնական այս բնագավառը նպաստում է աշխարհի մասին ամբողջական գիտելիքներ ստանալուն, գեղագիտական, բարոյական, հասարակական, համամարդկային և ազգային արժեքների գիտակցմանը, պահպանմանը և փոխանցմանը:¹ Բնականաբար մեծանում է օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի դերը: Վերջինս խնդիր է դրել մշակել օտար լեզուների դասավանդման այնպիսի մեթոդներ և ռազմավարություններ, որոնք կնպաստեն մեր երկրում բազմալեզվության և մշակույթների բազմազանության զարգացմանը: Բազմալեզվությունը հասարակությանն ապահովում է համաշխարհային քաղաքական, տնտեսական, մշակութային և կրթական տարածքում արագ ինտեգրում, իսկ անհատին հնարավորություն է տալիս ծանոթանալ համաշխարհային գիտական, հասարակական, տնտեսական, մշակութային տեղեկատվություններին:²

Բազմաթիվ մասնագիտական աղբյուրների վերլուծության արդյունքում մենք եկել ենք այն եզրակացության, որ ՀՀ-ում գրեթե բացակայում են գիտական հետազոտություններ՝ նվիրված ֆրանսերենի դասավանդման մեթոդիկային, հատկապես քերականական մեխանիզմների ձևավորման հիմնահարցին, ինչն ընկած է հաղորդակցման հիմքում:

Ամփիճելի է այն փաստը, որ առանց քերականական հմտությունների անհար է կազմակերպել և իրականացնել բանավոր և գրավոր հաղորդակցումը, քանի որ դասապրոցեսում պետք է ապահովել մի կողմից լեզվի նորմերը, մյուս կողմից՝ դրան զուգահեռ զարգացնել հաղորդակցական կարողությունները:

Այս տեսանկյունից այսօր առկա են օբյեկտիվ հակասություններ.

- հասարակական պատվերի բարձրորակ պրոֆեսիոնալներ պատրաստելու պահանջարկի և գոյություն ունեցող դասավանդման պրակտիկայի,
- ժամանակակից լեզվակրթության սկզբունքների իրականացման ամիրաժեշտության և քերականության ավանդական դասավանդման մեթոդիկայի,
- հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման և ուսումնական գործընթացում քերականության յուրացման, որպես օտար լեզվի ուսուցման միջոցի նպատակադրման միջև:

¹ Հայաստանի Հանրապետության լեզվակրթական քաղաքականության ուրվագիծ. Ազգային գեկույց, Եր., Լինգվա, 2008, էջ 51

² Հանրակրթական հիմնական դպրոցի ֆրանսերենի չափորփչիչ, 3-4 դասարաններ, Եր., 2012, էջ 4

Այսպիսով՝ **ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ** պայմանավորված է վերոհիշյալ հակասություններով.

- ՀՀ հանրակրթական դպրոցներում ֆրանսերենի դասավանդման հիմնահարցերին նվիրված մեթոդական հետազոտությունների սակավությամբ,
- Ժամանակակից լեզվակրթության զարգացման միտումներով,
- քերականորեն գրագետ հաղորդակցման նպատակների իրականացման անհրաժեշտությամբ:

ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԸ. ՀՀ հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում բանավոր հաղորդակցման ուսուցման գործընթացն է:

ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱԼ. Հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում ֆրանսերենի քերականական մեխանիզմների ձևավորման մեթոդական համակարգն է, որը հաղորդակցական կարողությունների հիմք է կազմում:

ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ. Ձևավորել ֆրանսերենի բանավոր խոսքում **A1.1** մակարդակի քերականական մեխանիզմների գործածության հմտություններ՝ հաշվի առնելով օտար լեզուների ուսուցման/ուսումնառության արդի միտումները, հայ սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները, առաջացած դժվարությունները:

Ընդհանուր նպատակներից բխում են հետևյալ **խնդիրները.**

- ուսումնասիրել և վերլուծել մասնագիտական՝ հոգեբանական, մանկավարժական, լեզվաբանական, մեթոդական գրականությունը,
- վերլուծել ՀՀ հանրակրթական դպրոցների տարրական դասարանների ուսումնական չափորոշիչները, ծրագրերը, գործող դասագրքերը,
- բացահայտել տարրական դասարաններում աշակերտների ֆրանսերենի քերականության ուսուցման ընթացքում հանդիպող դժվարությունները,
- մշակել քերականական կարողությունների և հմտությունների բանավոր հաղորդակցման մեթոդական համակարգը,
- ստեղծել վարժությունների համակարգ, որը հնարավորինս կնպաստի լեզուների փոխներթափանցման ազդեցության նվազեցմանը, բանավոր հաղորդակցմանը, քերականական հմտությունների ձևավորմանը,
- անցկացնել մշակված մեթոդական համակարգի փորձարկում:

ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՍՔՈՒՄ ԵՆ.

- հումանիստական դաստիարակության մոտեցումը (Դյուի Դ., Լիխայով Բ. Տ., Ջիմնիայա Ի. Ա., Թոփուլյան Ա. Օ. և այլք),
- անձնակենտրոն մոտեցումը (Ջիմնիայա Ի. Ա., Լեոնտև Ա. Ա., Վիգոտսկի Լ.Ս.),
- հաղորդակցական-ճանաչողական մոտեցումը (Բերման Ի. Մ., Բին Ի. Լ., Բուխբինդեր Վ. Ֆ., Ֆոլոմկինա Ս. Կ., Աստվածատրյան Մ. Գ.),
- կոմպետենտության վրա հիմնված մոտեցումը (Բին Ի. Լ., Գալսկովա Ն. Դ., Ջիմնիայա Ի. Ա., Խուտորսկոյ Վ. Վ., Սաֆոնովա Վ. Վ., Շադրիկով Վ. Դ., Շելյև Ժ., CECR):

Ուսուցման և ուսումնառության մեթոդաբանական համակարգը սովորողներին հնարավորություն է տալիս հաղորդակից դառնալ համամարդկային արժեքներին, նպաստում է սովորողների դաստիարակությանը, ուսումնառությանը, ստեղծագործական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

ԴԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ. Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են. **տեսական**՝ մասնագիտական գրականության վերլուծություն, **էմպիրիկ**՝ դիտարկում, թեստավորում (դիագնոստիկ և ստուգիչ), փորձարարական ուսուցում և **վիճակագրական**՝ թեստավորման և փորձարարական ուսուցման արդյունքների տվյալների վերլուծություն:

ԴԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԸ. Ֆրանսերենով քերականորեն գրագետ հաղորդակցությունը հնարավոր է արդյունավետ դարձնել, եթե

- հաշվի առնվեն ազգային դպրոցում ֆրանսերենի ուսուցման առանձնահատկությունները, քերականության ուսուցման նորովի մոտեցումները,
- հիմնվի լեզվական կոմպետենցիաների վրա,
- աշակերտների տիպական սխալների վերլուծության միջոցով բացահայտվեն քերականության ուսուցման տիպական դժվարությունները,
- մշակվի համապատասխան մեթոդական համակարգ, որը կապահովի քերականական կոմպետենցիաների մեխանիզմների ձևավորմանը:

ԴԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ. Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում փորձ է արվել ստեղծել ֆրանսերենի քերականության ուսուցման նոր մեթոդական համակարգ՝

- ճշգրտելով քերականության ուսուցման նպատակները,
- վերանայելով ուսուցման բովանդակությունը մինիմիզացիայի սկզբունքի և քերականական նյութի մոդելավորման հիման վրա,
- բացահայտելով «քերականական մեխանիզմներ» հասկացության բովանդակային ծավալը,
- մշակելով ֆրանսերենի քերականական նյութի ներմուծման, բացատրության ամրապնդման և ստուգման փուլերը վարժությունների և ռազմավարությունների միջոցով,
- օգտագործելով փոխներգործուն մեթոդներն ու խաղային նորագույն տեխնոլոգիաները՝ ձևավորել քերականական կոմպետենցիան՝ որպես բանավոր հաղորդակցման հիմք:

ԴԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆՎԿՈՒԹՅՈՒՆԸ. Հաշվի առնելով ՀՀ-ում ազգային դպրոցի տարրական դասարաններում ֆրանսերենի քերականության ուսուցման առանձնահատկություններն ու դժվարությունները՝

- առաջարկվել են ֆրանսերենի քերականության ուսուցմանն ուղղված տեսական դրույթներ, որոնք հիմք կարող են ծառայել այլ օտար լեզուներ դասավանդելիս,
- ճշգրտվել են ֆրանսերենի քերականության ուսուցման նպատակներն ու բովանդակությունը,
- բացահայտվել են քերականորեն գրագետ հաղորդակցվելուն խոչընդոտող դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. Հետազոտության արդյունքները կարող են

- օգտագործվել ազգային դպրոցի տարրական դասարաններում ֆրանսերեն դասավանդելիս,
- բուհերում օտար լեզուների մեթոդիկայի դասընթացներում, սեմինար պարապմունքների ընթացքում,
- ընդգրկվել նոր ուսումնական ծրագրերում, դասագրքերում, մեթոդական ձեռնարկներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԻՄՆԱԿՈՐԿԱԾՈՒԹՅՈՒՆՆ ապահովված է հոգեբանամանկավարժական, մեթոդական հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, հիմնախնդրի վերաբերյալ տեսական և մեթոդաբանական ուսումնասիրությամբ, գիտահետազոտական մեթոդների կիրառմամբ, քերականության ուսուցման փորձաքննությամբ, մշակված և ներդրված մեթոդական համակարգի արդյունավետությամբ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՑՆԵՐԸ.

1. ՀՀ հանրակրթական դպրոցում ֆրանսերենի, որպես օտար լեզու, ուսուցումն իրականացվում է ինստիտուցիոնալ բազմալեզվության պայմաններում, որը յուրահատուկ դժվարություններ է առաջացնում՝ կապված հայերենի, ռուսերենի, ֆրանսերենի փոխազդեցությամբ:
2. Աշակերտների հիմնական սխալները պայմանավորված են լեզուների ներթափանցմամբ, որն առավել վառ է արտահայտվում քերականական հմտություններ ձևավորելիս:
3. Աշակերտների տիպական սխալների նվազեցմանը նպաստում է քերականական նյութի տարբերակված ուսուցման և համապատասխան վարժությունների համակարգի ստեղծումը՝ հաշվի առնելով.
 - քերականական կոմպետենցիայի սահմանված **A1.1** մակարդակի բնութագրիչները,
 - ազգային դպրոցում ֆրանսերենի քերականության ուսուցման դժվարությունների տիպականացման սկզբունքները,
 - քերականական մեխանիզմների ձևավորմանն ուղղված մեթոդները, վարժությունները, ռազմավարությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ. Հետազոտությունն ացկացվել է երեք փուլով.

- **առաջին փուլում** (2008-2009) կատարվել է աշխատության հիմնախնդրի վերաբերյալ հոգեբանամանկավարժական, լեզվաբանական, մեթոդական գրականության վերլուծություն, սահմանվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածն ու հիմնարդույթները,
- **երկրորդ փուլում** (2009-2010) մշակվել են նախաթեստավորման քերականական խնդիրներն ու առաջադրանքները՝ տարրական դասարանների աշակերտների ֆրանսերենի ուսուցման դժվարությունները վերհանելու և ճշգրտելու նպատակով,
- **երրորդ փուլում** (2010-2012) կազմվել և իրականացվել է փորձարարական ուսուցում, ամփոփվել են հետազոտության արդյունքներն ու եզրակացությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲԱԶԱ. Ուսուցումն անցկացվել է 2011-2012 թթ. Երևանի քաղաքի թիվ 119 դպրոցի տարրական դասարաններում, ուն մասնակցել է թվով 94 աշակերտ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ. Հետազոտության առաջադիր խնդիրները լուծելուն նպաստել են կոմպետենտության (CECR)³, երկլեզվության, բազմալեզվության /Աստվածատրյան Մ., Եսաջանյան Բ./, օտար լեզուների ուսուցման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման /Աստվածատրյան Մ., Թերզյան Գ./, ներլեզվային, միջլեզվային փոխներթափանցման հաղթահարման /Բարլեզիզյան Ա., Ստեփանյան Վ./, խոսույթային իրազեկության զարգացման /Յարությունյան Ն., Բալայան Մ./, քերականական խոսքի ուսուցման /Батулина Е. Б./, խաղերի /Вагнер М. Э., Давыдова З. М., Дворник М. В., Чуйкова С. Л. Савченко О. Ю./, ուսումնական խաղերի /Калаева Г. Г./, դերային խաղերի միջոցով քերականության ուսուցման /Калимулина О. В., Семенова М. Б./, հաղորդակցական քերականության ուսուցման /Карпова Л. И., Чернова Г. М., Béacco J.-C., Christophe C., Cuq J-P., Germain C., Seguin H., Sheils J./, խոսակցական քերականության ուսուցման /Мильруд Р. П./, երգերի միջոցով քերականության ուսուցման /Гебель С.Ф./, քերականական վերծրության /Цетлин В. С., Cicurel, F./, քերականության ուսուցման սկզբունքների ընտրության /Шендельс Е. И., Abry D., Chalaron M-L., Barraud M./, քերականության ուսուցման /Landgraaf W., Charnet C., Nguyn Q- Th./, տեսությունները և մոտեցումները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԸ.

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի Վ. Բոյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի մանկավարժության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնում: Ատենախոսության նյութերը ներկայացվել են հանրապետական, միջազգային, բուհական և միջբուհական գիտաժողովներում, որոնք նվիրված էին ժամանակակից լեզվաբանության և լեզուների դասավանդման մեթոդիկայի հիմնահարցերին:

- Ֆրանկոֆոնիայի շաբաթվա շրջանակներում կազմակերպված «Աշխարհի լեզվական պատկերը» 2-րդ միջազգային գիտաժողովում, (Երևան, 2010):
- Կրթություն, բարեփոխումներ, հիմնախնդիրներ (Վանաձոր, 2010):
- Ֆրանսիական բանասիրություն և ֆրանսերեն՝ որպես երկրորդ օտար լեզվի դասավանդման արդիական խնդիրները գիտաժողովում (Երևան, 2010):
- Ֆրանկոֆոնիայի շաբաթվա շրջանակներում կազմակերպված «Աշխարհի լեզվական պատկերը» 3-րդ միջազգային գիտաժողովում (Երևան, 2011):

Հետազոտության հիմնական դրույթները արտացոլվել են տպագրված հոդվածներում:

Փորձարարական աշխատանքները իրականացվել են Երևան քաղաքի թիվ 119 դպրոցի 3-րդ և 4-րդ դասարաններում 2011-2012 թվականներին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ օգտագործվել են ֆրանսերենի դասավանդման Երևան քաղաքի թիվ 119 դպրոցի տարրական դասարաններում,

³ Cadre Européen Commun de Référence

ինչպես նաև ԵՊԼՀ-ի չորրորդ կուրսի ուսանողների մանկավարժական պրակտիկայի ընթացքում:

ԴԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ. Ատենախոսությունը բաղկացած է 123 համակարգչային էջից: Այն ընդգրկում է ներածություն, երեք գլուխ, եզրակացություն, գրականության ցանկ, հավելվածներ, ինչպես նաև 11 աղյուսակ, 5 գծապատկեր, 6 տարագիր, 5 նկար:

ԴԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ շարադրված են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, հիմնական խնդիրները, մեթոդաբանական հիմքը, գիտական վարկածը, գիտական նորույթը, տեսական և գործնական արժեքները, մեթոդները, մշակվածության աստիճանը:

Առաջին գլխում «ՀՀ տարրական դպրոցներում ֆրանսերենի ուսուցման հիմնահարցերը» քննության են առնվել օտար լեզուների ուսուցման փորձը ՀՀ հանրակրթական դպրոցներում, ֆրանսերենի ուսուցման և ուսումնառության նպատակները, «քերականական կոմպետենցիա» հասկացությունը՝ որպես հաղորդակցական իրազեկության կարևորագույն բաղադրիչ:

1.1 Ենթագլխում **«Տարրական դպրոցում ֆրանսերենի քերականության դասավանդման խնդիրների պատմությունից»** ներկայացրել ենք հանրապետությունում և արտերկրներում, խորհրդային և հետխորհրդային շրջանում կատարված մի շարք կարևոր գիտական հետազոտություններ՝ նվիրված օտար լեզվով հաղորդակցման զարգացման մեթոդիկային:

Ուսումնասիրելով և վերլուծելով մեր հանրապետությունում և արտերկրներում կատարված մի շարք գիտական հետազոտություններ և կարևորելով դրանց ներդրման անհրաժեշտությունը օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ոլորտում՝ պետք է նշել, որ դրանք բնականաբար չեն կարող հաշվի առնել Հայաստանի ազգային դպրոցում հայ աշակերտի կողմից ֆրանսերենի ուսուցման և ուսումնառության առանձնահատկություններն ու դժվարությունները: Ելնելով վերոհիշյալից՝ մեր կողմից մշակվել է այնպիսի մեթոդաբանություն, որն ապահովում է սովորողների հաղորդակցական կոմպետենցիայի քերականական զարգացումը:

Օտար լեզուների ուսուցումը և ուսումնառությունը հանրակրթական դպրոցում հենվում է հաղորդակցական սկզբունքի վրա: Առաջին պլան է մղվում օտար լեզվով մտքեր ընկալելու, փոխանակելու, միմյանց հետ օտար լեզվով շփվելու կարողությունների և հմտությունների ապահովումը (արտադրողական/պրոդուկտիվ քերականությունը): Հատկանշական է, որ ՀՀ-ում հանրակրթության ոլորտում կատարվել են ընդհամենը երկու հետազոտություն, որոնք նվիրված են ազգային դպրոցում ֆրանսերենի դասագրքերի ներդրման հարցերին (Խ. Էքիմյան) և բանավոր հաղորդակցման զարգացման հիմնահարցերին (Ա. Արշակյան):

1.2 Ենթագլխում **«Օտար լեզուների ուսուցման նպատակները»** անդրադարձել ենք օտար լեզուների ուսուցման և ուսումնառության հիմնական նպատակին՝ հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորմանը (հատկապես վերջինիս քերականական կողմի), որը ներառում է լեզվական, խոսքային, հանրամշակութային, գործաբանական, ուսումնական, փոխհատուցման

կարողությունները: Հաղորդակցական կարողությունների ձևավորումը ենթադրում է լեզվական միջոցների տիրապետումը և դրանց ընկալումը (ունկնդրելիս, ընթերցելիս), գործածումը (խոսելիս, գրելիս): Սակայն պետք է նշել, որ այսօրվա գործող ծրագրերը շատ ընդհանուր են ձևակերպված և լիարժեք չեն արծարծում օտար լեզուների ուսուցման արդի պահանջները:

Ուսումնաստիարակչական գործընթացի կենտրոնում պետք է լինի սովորողի անհատականությունը, նրա տարիքային առանձնահատկությունները, պահանջմունքները, հետաքրքրությունները և ձեռք բերած փորձը: Հաղորդակցումը ընդգրկում է ոչ միայն գիտելիքներն ու խոսքային կարողությունները, այլ նաև «*կոմպետենցիա*» հասկացությունը:

Օտար լեզվի ուսուցման հաղորդակցական նպատակների իրականացման արդյունքում ձևավորվում են օտարալեզու խոսքային հմտություններ և կարողություններ: Եվրախորհրդի լեզվակրթության քաղաքականությանն առնչվող փաստաթղթերում առանձնապես կարևորվում են այսպես կոչված *ընդհանուր կոմպետենցիաները* – *compétences générales*.

- *գիտելիքներ* (փաստացի/դեկլարատիվ)– *savoirs*,
- *կարողություններ* - *savoir-être*,
- *սովորելու ընդունակությունները* - *savoir-apprendre*,
- *հմտությունները* - *savoir-faire*.⁴

Հաղորդակցական կոմպետենցիայի (*compétence à communiquer langagièrement*) ձևավորումն ու զարգացումը ենթադրում է օտար լեզվի ուսուցում՝ լեզվակիր ժողովրդի գրականության և մշակույթի համատեքստում:⁵ Հաղորդակցական կոմպետենցիան ներառում է հետևյալ կարողությունները՝ *լեզվական* (*linguistique*), *հանրալեզվաբանական* (*sociolinguistique*), *գործաբանական* (*pragmatique*):

Հաղորդակցական կոմպետենցիան բարդ երևույթ է, որի բոլոր բաղադրիչները հանդես են գալիս որպես մեկ ամբողջություն: Սովորողների արդյունավետ հաղորդակցությունն ապահովելու համար անհրաժեշտ է այն ձևավորել և զարգացնել ուսուցման բոլոր աստիճաններում:

1.3 ենթագլխում «**Քերականական իրազեկությունը որպես հաղորդակցական կոմպետենցիայի կարևորագույն բաղադրիչ**» անդրադարձել ենք *քերականական կոմպետենցիայի բովանդակությունը*, որը կարելի է սահմանել որպես քերականական նյութի, գիտելիքի և կառուցվածքների օգտագործման կարողություն: Քերականական կոմպետենցիան կապակցություններ և նախադասություններ վերարտադրելու, ճանաչելու, նրանց իմաստը հասկանալու կարողությունն է:

Քերականությունն ուսումնասիրելիս առաջին պլան են մղվում որոշակի գործառնությունների կատարման խնդիրները, օրինակ՝ սկզբնական փուլում սովորողը պետք է կարողանա ողջունել/ներկայանալ, հաստատել կամ մերժել ասվածը, պարզ հարցեր տալ զրույց վարելիս: Դպրոցում այդ գործառնությունների և թեմաների շուրջ նոր գիտելիքներ ձեռք բերելով՝ աշակերտները կարողանում են համադրել և

⁴ Un Cadre Européen Commun de Référence, Pour les langues vivantes: apprendre, enseigner, évaluer, Conseil de la coopération culturelle, Strasbourg: Les Editions Didier, 2001, p.14

⁵ Béacco J.-C., L'approche par compétences, P., Didier, 2007, p. 49-53

հակադրել իրենց գիտելիքները, արդյունքում՝ դրանք հստակեցնելով և ընդհանրացնելով:


Տարրական դպրոցում առանձնահատուկ նշանակություն ունեն քերականական տարրերի կառուցվածքային աստիճանավորումը, տարածվածությունը հնարավորինս շատ երևույթների վրա, գործածության հաճախականությունը, ընդհանուր օգտակարությունը:

Երկրորդ գլուխը «Տարրական դպրոցում ֆրանսերենի քերականության ուսուցման դժվարությունները» բաղկացած է երեք ենթագլխից:

2.1 ենթագլխում «Նախաթեստավորում՝ աշակերտների ֆրանսերենի քերականական նյութի իմացության և գործածության կարողությունների հայտորոշում» ներկայացրել ենք նախաթեստավորման առաջադրանքները և արդյունքների վերլուծությունը:

Քերականության ուսուցման/ուսումնառության գործընթացում առկա են մի շարք դժվարություններ: Քերականական մեխանիզմների տիրապետման դժվարությունները որոշելու համար անհրաժեշտություն ծագեց նախաթեստավորման միջոցով ճշտել, թե հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում որքանով են իրականացվում օտար լեզուների ծրագրային պահանջները, և դասագրքերում տրված քերականական նյութը որքանով է նպաստում հաղորդակցության զարգացմանը:

Նախաթեստավորումն անցկացվել է 2011 թվականի փետրվար-մարտ ամիսներին Երևանի քաղաքի թիվ 119 դպրոցի 4-րդ դասարաններում, ոին մասնակցել է 94 աշակերտ (470 աշխատանք): Տրված աշխատանքները ստուգելուց և վերլուծելուց հետո տիպականացարել ենք աշակերտների սխալները:



2.2 ենթագլխում «Աշակերտների տիպական սխալների վերլուծություն» ներկայացրել ենք աշակերտների կատարած սխալների մանրամասն վերլուծություն: Թույլ տրված սխալները վկայում են աշակերտների քերականական մեխանիզմների ոչ բավարար ձևավորվածության մասին: Պատճառն այն է, որ սովորողները այս կամ այն չափով յուրացվող լեզվական նյութի սահմաններում, իրենց ծանոթ թեմաների կամ իրադրությունների շուրջ դժվարանում են համապատասխան նախադասություն կազմել, կաշկանդվում են տարբեր հաղորդակցական իրադրություններում ինքնուրույն հաղորդակցվել, իրենց մտքերն արտահայտել: Սխալները մեծ մասամբ առաջացել են մայրենի լեզվի բացասական ներթափանցման հետևանքով՝ կապված քերականական ձևերի սխալ ընտրությամբ:

Դեռևս տարրական դասարաններից սկսած պետք է դրվեն բանավոր հաղորդակցման հիմքերը: Մինչդեռ գործող դասագրքերի ոչ լիարժեք

վարժությունների համակարգը չի կարող հիմք ծառայել քերականական մեխանիզմների ձևավորման և զարգացման գործընթացի համար: Անհրաժեշտ է մշակել այնպիսի վարժությունների համակարգ, որը կչեզոքացնի մայրենի լեզվի բացասական ներթափանցումը՝ նպաստելով բանավոր խոսքի քերականորեն ճիշտ ձևակերպմանը:

2.3 ենթագլխում **«Տարրական դպրոցում ֆրանսերենի քերականական մեխանիզմների ձևավորման դժվարություններ»** առանձնացրել ենք քերականական այն դժվարությունները, որոնց աշակերտները հանդիպել են նախաթեստավորման առաջադրանքները կատարելիս:

Ձևաբանական բնույթի դժվարությունները պայմանավորված են հայերենում գոյականի և դրան կից կատեգորիայի բացակայությամբ, ֆրանսերենի բայական համակարգում խնդրառության առանձնահատկություններով:

Շարահյուսական բնույթի դժվարությունները բխում են ֆրանսերենի և հայերենի նախադասությունների շարահասության առանձնահատկություններով:

Երրորդ գլխում անդրադարձել ենք **«Ֆրանսերենի հաղորդակցական քերականության ուսուցման մեթոդական նոր համակարգի մշակմանը և փորձարկմանը»:**

3.1 ենթագլուխ **«Ֆրանսերենի քերականության ուսուցման հիմքում ընկած տեսական հիմունքներ»**. Օտար լեզվի ուսուցումը բարդ գործընթաց է, որը պայմանավորված է բազմաբնույթ գործոններով: Խոսքային գործունեության բնագավառում քերականությունը գործում է որպես հաղորդակցման կարևոր միջոց: Քերականության տիրապետումը, մի կողմից՝ հնարավորություն է տալիս սահմանված կանոնների միջոցով կառուցել ճիշտ նախադասություններ (պրոդուկտիվ քերականություն), մյուս կողմից՝ քերականական երևույթները ճանաչել տեքստում (ռեցեպտիվ քերականություն): Ինչպես նշում է Ռ. Պ. Միլրուդը՝ «Անհրաժեշտ է հաղորդակցման ընթացքում առանձնացնել քերականական գեները՝ արտահայտության տարրերը, որոնք կարելի է ընդարձակել ընդունված կանոնների համաձայն»:⁶ Սակայն ֆրանսերենի ուսուցման տեսանկյունից քերականական «քլաստերը» իր մոդելներով քիչ է ուսումնասիրված, ինչը դժվարացնում է քերականական անհրաժեշտ նվազագույնի կառուցվածքների, «պատրաստի քերականակն նյութի» ընտրությունը: Դրանք հանդես են գալիս տեքստերում, նախադասություններում, արտահայտություններում, դարձվածքներում, որոնք ոչ միշտ է հնարավոր դասակարգել ըստ քերականական կանոնների:

Ինչպես նշում է Վ. Ս. Ցետլինը, քերականական մեխանիզմների տիրապետման գործընթացը ենթադրում է վերջինիս երեք հիմնական բաղադրիչների առանձնացում. քերականական գործողությունների տիրապետում (հմտություններ), պատրաստի քերականական նյութի և քերականական ընդհանրացումների յուրացում: Հմտությունների մակարդակում ուսումնասիրվում են այնպիսի քերականական երևույթներ ինչպիսիք են՝ բառափոխությունը, բառակազմությունը և նախադասությունների կազմությունը, որպես պատրաստի նյութ հանդես են գալիս քերականական ձևույթները և սպասարկու բառերը: Քերականական

⁶ Мильруд Р. П. Коммуникативность языка и обучение разговорной грамматике (упрощенным предложениям) // Иностранные языки в школе. - N2.-2002.-С.17

ընդհանրացումների հիմք են ծառայում ինչպես գործողությունները, այնպես էլ բուն քերականական երևույթները:⁷

Քերականության ուսուցման մեթոդական համակարգը կառուցելիս՝ հաշվի է առնվել.

- հոգեբանական գործոնը՝ երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները (վառ հիշողությունը, ընդօրինակման ընդունակությունը, բարձր ֆիզիկական ակտիվությունը և այլն),
- անձնակենտրոն և կոմպետենտային, գործակցական, ինչպես նաև դիդակտիկական և մեթոդական գործոնները, հատկապես զննականության (վիզուալիզացիա իմաստով), գիտակցականության (քերականական սխեմաների, կառուցվածքների «ներկայացուցիչների» (սուբստիտուտների), ընդհանրացումների ընդունում/ընկալում և օգտագործում),
- ինտերակտիվ մեթոդների և խաղային տեխնոլոգիաների կիրառում,
- քերականական նյութի մոդելավորում:

Տարրական դպրոցի համար բնորոշ է քերականական նյութի *համակենտրոն* (կոնցենտրիկ) շրջանների կառուցումը՝ ուսուցման յուրաքանչյուր հաջորդ աստիճանում նոր տեղեկություններով անցած նյութի ընդլայնումն է: Արդյունքում նյութն ընդարձակվում և խորանում է: Յուրաքանչյուր համակենտրոն շրջան ընդգրկում է ձևաբանության և շարահյուսության երևույթներ, որոնք անհրաժեշտ են սովորողներին հաղորդակցվելիս: Մեծ դեր ունի բառապաշարի բավարար քանակի իմացությունը, որը գրեթե բացակայում է տարրական դպրոցի աշակերտների մոտ:

3.2 Ենթազուլիս **«Քերականական նյութի մատուցման եղանակներ».**

Յուրաքանչյուր քերականական կառույց պետք է հետևողականորեն ուսուցանվի՝ սկսած բացատրությունից և նրա գործածության ընկալումից ընդհուպ վերջինիս գործածումը խոսքում: Լեզվի գործնական տիրապետումը հնարավոր չէ առանց հիմնական քերականական ավտոմատիզմների ձևավորման, որոնց կարևոր նախապայմանը խոսքային գործունեության բոլոր տեսակների տիրապետման համար անհրաժեշտ և բավարար քերականական նվազագույն նյութի (միհիմունի) ընտրությունն ու նրա ավտոմատիզմների մակարդակով իրացումն է:

Խոսքային մոլուցները, որոնք այս կամ այն **քերականական կառուցվածքների** «ներկայացուցիչներ» են, որոշակի շարահյուսական և ձևաբանական հատկանիշներով օժտված տիպական դարձվածքներն են, որոնք ապահովում են մատուցվող նյութի արագ ընկալումը: Մոդելն ըստ համանմանության /անալոգիայի/ խոսքային մոլուցների տարբերակներ է ենթադրում, իսկ քերականական կանոնը՝ ավելի վերացական բարդ մտային գործողություններ:

Քերականական կառուցվածքների հիման վրա քերականության ուսուցումը հանգեցնում է հաղորդակցման ընթացքում դրանք օգտագործելուն: Հաղորդակցման պահանջների իրականացման համար առաջին պլան են մղվում քերականական մոդելները, որոնք անմիջականորեն գործածվում են խոսքում:

⁷ Петлин В. С. Основы методики обучения грамматике французского языка в средней школе. Автореф. дис. д-ра пед. наук. - М. : - 1966, С. 7-8

Քերականական նոր նյութի բացատրությունն սկսվում է համատեքստում քերականական կառուցվածքների ցուցադրումից՝ նշանակության, ձևի և գործածության բացահայտումով: Այնուհետև ստուգվում է ներմուծված նյութի ընկալման աստիճանը: Նյութի նախնական ամրապնդումն ապահովվում է կառուցվածքի վերարտադրմամբ, որի ընթացքում կատարվող վարժությունների նպատակը քերականական հմտությունների և կարողությունների ձևավորումն է: Բացատրության փուլին հաջորդում է բանավոր վարժությունների կատարումը, որի առաջադրանքները սովորողներին մղում են համապատասխան իրադրություններում գործածել ներմուծված նոր կառուցվածքները:

Հաղորդակցական կարողությունները զարգացնելիս քերականական նյութի ներմուծումը գործածության ոլորտի զուգակցման դեպքում դժվարություն է ներկայացնում, որտեղ ձևը կարող է արտահայտել մի քանի իմաստ:⁸ Տարրական դասարանների սովորողները դժվարությամբ են ըմբռնում քերականական կառուցվածքների և գործածության ոլորտի առանձնահատկությունները: Հարկ է նշել, որ հաղորդակցական կարողություններն իրադրային վարժությունների միջոցով վարժեցվում են համատեքստում:

Քերականական նոր նյութի ծանոթացման ընթացքում հաշվի են առնվում այն դժվարությունները, որոնք բխում են հայերենի և ֆրանսերենի քերականական համակարգերի տիպաբանական առանձնահատկություններից: Քերականական երևույթներն ընդգրկում են հետևյալ հիմնական փուլերը.

- ինդուկտիվ մեթոդով և խոսքային նմուշների միջոցով նոր նյութի ցուցադրում, բացատրություն,
- ներմուծվող նյութի ստուգման իրականացում,
- խոսքային նմուշների նախնական ամրապնդում:

Քերականական նոր նյութի ստուգման և նախնական ամրապնդման իրագործումը, ըստ էության, սովորողների քերականական գործողության կողմնորոշիչ հիմքի և հաղորդակցական հմտությունների ձևավորումն է:⁹ Ձուգահեռ անհրաժեշտ է անցկացնել ներմուծված քերականական նյութի ըմբռնման ստուգումը և նախնական ամրապնդումը, որի արդյունավետությունը կապահովվի խոսքային իրավիճակներում ներմուծված երևույթի գործածությունը: Վարժությունների համակարգը մշակելիս հիմնվել ենք Մ. Գ. Աստվածատրյանի հայեցակարգի վրա, որի էական գաղափարները կիրառվել են Ա. Գ. Սարգսյանի սեղմագրում:¹⁰ Ըստ Մ. Գ. Աստվածատրյանի¹¹ պետք է հաշվի առնել վարժությունների *նպատակը*, տվյալ առաջադրանքի ուսումնական *խնդիրը*, *օբյեկտը*, *տիպերն ու տեսակները և ծագող դժվարությունները*.

⁸ Germain C., Seguin H., La grammaire en didactique des langues, Québec Canada: CEC (coll. « Le point sur... »), 1995, p.31.

⁹ Սարգսյան Ա., Անգլերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի, բայական ժամանակածևերի ուսուցումը բարձրագույն դպրոցում, Ատենախոսություն, մանկ. գիտ. թեկն., Եր., 2004, էջ 77

¹⁰ Սարգսյան Ա., Անգլերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի, բայական ժամանակածևերի ուսուցումը բարձրագույն դպրոցում, Սեղմագիր, մանկ. գիտ. թեկն., Եր., 2004, էջ 14

¹¹ Аствацатрян М. Г. Обучение иностранному языку в усковиях подвижного субординированного биллингвизма (на примере немецкого языка в армянской школе). Автореф. дис.д-ра пед.наук. - М.: - 1988. - С.232

Յուրաքանչյուր փուլի վարժությունները համապատասխանում են այս կամ քերականական երևույթի ուսումնասիրությանը: Դրանք կարող են լինել *ընդօրինակման, տեղադրման, փոխակերպման, հարց ու պատասխան ակնկալող* վարժություններ:

Նախապատրաստական փուլում տեղի է ունենում տվյալ քերականական նյութի ծանոթացումը, ձևի և իմաստի առանձնահատկությունների ընկալումը և տարբեր քերականական վարժությունների կատարումը:

Քերականական երևույթների ամրապնդման փուլում տեղի է ունենում ուսումնասիրվող քերականական երևույթների գործածության ավտոմատացում, որն իրավամբ կարելի է անվանել նաև հմտությունների ձևավորման փուլ: Քերականական կառուցվածքների փոխակերպման վարժություններն իրենց բնույթով իրադրային են, որոնք աշակերտները կատարում են՝ հիմնվելով իրենց կենսափորձի վրա:

Խոսքային կարողությունների զարգացման փուլի ընթացքում սովորողները կատարում են հաղորդակցական վարժություններ:

Պրոդուկտիվ իրադրային վարժությունները հնարավորություն են տալիս ձևավորել տվյալ քերականական կառուցվածքը խոսքային գործունեության մեջ օգտագործելու կարողություններ: Հաղորդակցումը պրոդուկտիվ իրադրային երանգներով հարուստ է և միտված է արտահայտել տարբեր խոսքային մտադրության գործառնությունը՝ ցանկություն, զարմանք, խնդրանք, առաջարկություն: Հաղորդակցման ընթացքում լեզվական նյութի (բառապաշար, քերականություն, հնչյունաբանություն) ավտոմատացված յուրացումը ենթադրում է նաև աշակերտների խոսքամտածողական գործունեության զարգացումը: Քերականական երևույթներն ուսուցանվում են ըստ համակենտրոն սկզբունքի՝ հաշվի առնելով **A1.1** մակարդակի բնութագրիչները և ծագող դժվարությունները:


Այսպիսով, ձևավորվում են քերականական կառուցվածքների տեսողական և հնչյունական մոտորային պատկերները՝ շեշտը դնելով խոսքային նմուշների յուրացման վրա: Իհարկե, դա չի բացառում բառապաշարի շուրջ տարվող աշխատանքները, որոնք հանդես գալով որպես հիմնական կապող օղակ, մի կողմից՝ հնարավորություն են տալիս համալիր կերպով յուրացնել քերականությունը, բառապաշարը և հնչյունաբանությունը, մյուս կողմից՝ ապահովել նոր նյութի ներմուծումը, ստուգումը և ամրապնդումը: Թե՛ անփոփոխ, թե՛ մասնակիորեն փոփոխվող նմուշների ներմուծումն արդեն առաջին օրվանից թույլ է տալիս երեխաներին հաղորդակցվել միմյանց հետ: Փոփոխվող նմուշների ուսուցման մեթոդական նպատակահարմարությունն այն է, որ աշակերտները դրանց միջոցով համեմատաբար արագ կարող են օգտագործել նմուշների անփոփոխ մասը՝ որպես խոսքի պատրաստ միավորներ՝ արտահայտելով այս կամ այն խոսքային մտադրություն:

3.3 ենթազուլիս «Քերականության ուսուցման մեթոդները, վարժություններն ու ռազմավարություններ». *Բանավոր հաղորդակցակցում իրականացնելիս քերականական կառույցները ենթակա են ավտոմատացված գործածության:* Բանավոր և գրավոր խոսքում քերականական կառույցների ավտոմատացված գործածությունը մտքերը բանավոր արտացոլելու նախադրյալն է: Քերականական կարողությունների և հմտությունների զարգացման կարևոր պայմանը վարժությունների բավարար քանակի կատարումն է:


Քերականորեն գրագետ հաղորդակցման կարողություններն ու հմտությունները զարգացնող ռեցեպտիվ-պրոդուկտիվ, լեզվական-խոսքային վարժությունները կապված են միմյանց հետ: Այս կամ այն վարժության իրադրային բնույթը պետք է դիտվի որպես ընդհանուր պահանջ օտար լեզվի ուսուցման գործընթացում: Ձուտ լեզվական բնույթի առաջադրանք արտահայտող «Նախադասությունները դարձնել հարցական/ժխտական» առաջադրանքներում սովորողները ուշադրություն են դարձնում լեզվի զուտ ձևական կողմին: Վարժությունների այս տեսակները զուրկ են շարժառիթից և հաղորդակցում չեն ապահովում: Առավել արդյունավետ են այն վարժությունների տիպերն ու տեսակները, որոնք պարունակում են այս կամ այն հաղորդակցական խնդիրը, օրինակ՝ մի բան հաստատել կամ ժխտել, համաձայնվել իր ընկերոջ/զրուցակցի ասածին, զարմանք արտահայտել և այլն: Նմանատիպ վարժությունները հնարավորություն են տալիս ուշադրությունն ուղղել առանձին քերականական կառուցվածքներին և դիտել դրանք համապատասխան իրադրությունների շրջանակներում: Այսպիսով, իրադրային վարժությունների կիրառումը լեզվի ուսուցումը մոտեցնում է հաղորդակցական բնական պայմաններին:

3.4 ենթագլուխ «Փորձարարական ուսուցում՝ բանավոր հաղորդակցության քերականական մեխանիզմների ձևավորման նպատակով և վերջնարդյունքների ամփոփում».

Մեթոդական համակարգը ներդնելու համար անցկացվել է փորձարարական ուսուցում երևան քաղաքի թիվ 119 դպրոցում 2012 թվականի փետրվար-մարտ, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին 4-րդ դասարանի աշակերտների մոտ: Ստորև ներկայացնում ենք հետաքետավորման առաջին փուլի արդյունքները



Երկրորդ փուլի արդյունքները



Փորձարարական աշխատանքների վիճակագրական տվյալները և տիպական սխալների վերլուծության արդյունքներն ակնհայտորեն վկայում են այն

մասին, որ ավելի քան երկու անգամ աճել է ոչ միայն աշակերտների պատասխանների քանակը, այլ նաև որակը:

Այնուհանդերձ պետք է փաստենք, որ հայ երեխաները, ֆրանսերենի քերականական երևույթները յուրացնելիս հանդիպում են հետևյալ դժվարություններին, որոնց մասին վկայում են նրանց տիպական սխալները, հատկապես.

- ֆրանսերենի գոյականի սեռի և թվի,
- բայական համակարգի գործածության, հատկապես խնդրառության առանձնահատկությունների,
- ստացական դերանվանական ածականների,
- նախդիրների գործածության,
- նախադասությունների շարադասության:

Նման տիպական սխալները պայմանավորված են մայրենի լեզվի բացասական ներթափանցման ազդեցությամբ: Քերականական նյութի յուրացման և գործածության դժվարությունները կապված են նաև տվյալ նյութի բնույթից, ձևից և գործածության առանձնահատկություններից, ինչը մենք հաշվի ենք առել փորձարարական ուսուցման ընթացքում:

Այսպիսով, աշխատանքների վերջնաարդյունքները վկայում են ֆրանսերենով բանավոր հաղորդակցման քերականական մեխանիզմների զարգացման գործընթացում առաջարկված մեթոդական համակարգի հավաստիության մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իրականացված հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Ուսումնասիրվել և վերլուծվել է թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականությունը, մեթոդական հետազոտություններն ու ձեռք բերված փորձը՝ գրանցելով, որ ազգային դպրոցի տարրական դասարանների աշակերտների ֆրանսերենի քերականական կոմպետենցիայի ձևավորման կարողությունների հիմնահարցը արտացոլում է գտել մեթոդական գրականության մեջ:
2. Եվրախորհրդի լեզվակրթության քաղաքականության սկզբունքների և կոմպետենտային մոտեցումների հնարավորություն է տվել ճշգրտել տարրական դպրոցի աշակերտներին անհրաժեշտ ֆրանսերենի քերականական նվազագույնը, ուսուցման նպատակները և, որպես հիմնական պլանավորված վերջնաարդյունք, սահմանել է լեզվի տիրապետման **A1.1** մակարդակը՝ իր բնութագրիչներով:
3. Ելնելով տարրական դասարաններում ֆրանսերենի քերականության ուսուցման առանձնահատկություններից՝ անհրաժեշտություն է ծագել ֆրանսերենի ուսուցման բովանդակությունը, քերականական նյութը ներկայացնել աշակերտներին առավել ընկալելի մոդելների և համապատասխան խոսքային նմուշների միջոցով:

4. Ապացուցվել է, որ աշակերտների ֆրանսերենի քերականական նյութի ուսուցման և համապատասխան մեխանիզմների ձևավորման նպատակով անհրաժեշտ էր դուրս բերել աշակերտների տիպական սխալները, դրանցից բխող դժվարությունները և հաղթահարման ուղիները:
5. Աշակերտների դժվարությունները պայմանավորված են մի կողմից երկու լեզուներում քերականական երևույթների իմաստի, ձևի, գործածության ոլորտների անհամապատասխանությամբ (ամորոշ և որոշյալ հոդ, գոյականի սեռ, ածականի համաձայնեցում գոյականի հետ սեռով և թվով, ստացական դերանվանական ածականներ, ցուցական դերանվանական ածականներ, բայական ժամանակաձևեր, նախդիրներ, նախադասությունների շարադասություն), մյուս կողմից՝ մայրենի լեզվի բացասական ներթափանցմամբ:
6. Քերականական երևույթների դասակարգման սկզբունքներն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել քերականական նյութի ներկայացվող մոդելները և դրանց կոնկրետ դրսևորումները՝ ցուցիչները, այսինքն՝ կոնկրետ խոսքային մոլուցները, որոնք առավել դյուրին են դարձնում քերականական նյութի յուրացումը:
7. Ֆրանսերենի քերականական երևույթների ուսուցման մշակված մեթոդական համակարգը հիմք է ծառայել ներմուծման, բացատրության և քերականական նյութի յուրացման առաջադրանքների, վարժությունների և ռազմավարությունների մոդուլի կազմակերպման համար:
8. Մշակվել է ժամանակակից տեսական դրույթներին համապատասխան վարժությունների համակարգ՝ ուսուցանվող քերականական նյութին բնորոշ յուրահատկություններով, լեզուների բացասական ներթափանցումը հաղթահարման համար:
9. Վարժությունների համակարգը ստեղծելիս նպատակահարմար է ճշգրտել դրանց նպատակը, կոնկրետ ուսուցմանական խնդիրը, տիպերն ու տեսակները՝ իրականացնելով դրանք հնարավորինս խաղային ռեժիմում, որոնք համալիր ձևով համակցում են երկու գործառույթ՝ ուսուցողական և ստուգողական:

Այսպիսով, կատարած աշխատանքի արդյունքում ապացուցվել ենք, որ հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում ֆրանսերեն դասավանդելիս քերականական կոմպետենցիայի ձևավորման ընթացքում սխալները վերացնելու նպատակով անհրաժեշտ է համապատասխան ռազմավարության և վարժությունների համակարգի կիրառում՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային և անհատական, ինչպես նաև օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները ինստիտուցիոնալ բազմալեզվության պայմաններում:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրատարակումներում

1. Մ. Գ. Հովսեփյան «Պայմանաձևները՝ որպես զննականության սկզբունքի դրսևորում տարրական դպրոցում», Գիտամեթոդական հանդես, Մխիթար Գոշ, Վանաձոր 2008, էջ 126-128:
2. Մ. Գ. Հովսեփյան «Տարրական դպրոցում ֆրանսերենի դասերին հաղորդակցական քերականության դասավանդման մի քանի հարցերի շուրջ» (ռուսերենով), Լեզվաբանական կրթության հիմնահարցեր, Պրակ 3, «Բանբեր» Երևանի Վ. Բոյունովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, Երևան, 2010, էջ 127-135:
3. Մ. Գ. Հովսեփյան «Հաղորդակցական քերականության դասավանդումը Հայաստանի տարրական դպրոցում» (ֆրանսերենով), Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում, Երևան, 2012, էջ 31-40:
4. Մ. Գ. Հովսեփյան «Հաղորդակցական իրազեկության արտացոլումը օտար լեզուների դասավանդման գործընթացում», Աշխարհի լեզվական պատկերը, Ֆրանկոֆոնիայի շաբաթվա շրջանակներում կազմակերպված 3-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2012, էջ 204-211:

ОВСЕПЯН МАРИНЕ ГАГИКОВНА

**ФОРМИРОВАНИЕ ГРАММАТИЧЕСКИХ МЕХАНИЗМОВ УСТНОЙ
КОММУНИКАЦИИ НА ФРАНЦУЗСКОМ ЯЗЫКЕ В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 – “Методика преподавания и воспитания” (французский язык).

Защита диссертации состоится 19-го июня 2014 г. в 14.00 на заседании специализированного совета по педагогике 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

АКТУАЛЬНОСТЬ ИССЛЕДОВАНИЯ - В XXI веке знание иностранных языков стало жизненной потребностью, способствуя развитию коммуникативных навыков, межкультурному взаимопониманию, восприятию и оценке ценностей других культур. Целью обучения иностранным языкам является развитие устной и письменной форм

коммуникации. Неоспорим тот факт, что без языковых навыков, в частности грамматических, невозможно организовать и осуществить устную и письменную коммуникацию, так как в учебном процессе необходимо, с одной стороны, обеспечить овладение нормами языка, а с другой – развить коммуникативные умения.

ПРЕДМЕТ ИССЛЕДОВАНИЯ – методическая система формирования грамматических механизмов французского языка в начальных классах средних школ как основы развития коммуникативных умений.

ЦЕЛЬ ИССЛЕДОВАНИЯ – формирование навыков использования грамматических структур французского языка в устной речи на уровне А1.1, принимая во внимание возрастные и индивидуальные особенности учащихся-армян и современные тенденции обучения иностранному языку.

Намеченная цель обусловила решение следующих **задач**:

- проанализировать
 - научно-методическую, психолого-педагогическую и лингвистическую литературу по проблеме исследования;
 - образовательный стандарт, учебные программы, действующие учебники по французскому языку для начальных классов средних школ РА;
- выявить трудности обучения грамматике французского языка учащихся начальных классов;
- разработать и путем опытного обучения апробировать предложенную методическую систему формирования грамматических механизмов устной коммуникации;
- создать систему упражнений, направленную на формирование грамматических навыков устной коммуникации и нейтрализацию интерферирующего влияния родного языка.

НАУЧНАЯ НОВИЗНА ИССЛЕДОВАНИЯ

- разработана методическая система формирования грамматических механизмов французского языка для учащихся начальных классов армянской средней школы;
- раскрыта сущность нового подхода к обучению грамматике, в частности
 - уточнены цель и содержание обучения грамматике (с учетом принципа минимизации) на ранней стадии ее усвоения;
 - осуществлено моделирование грамматического материала;
- основываясь на концепции В.С. Цетлин, дана спецификация феномена *“грамматические механизмы речи”*, включающая в себя: *овладение грамматическими действиями (навыками), усвоение готового материала, усвоение грамматических обобщений и обобщенных способов действий;*
- предложена модель ознакомления с грамматическим материалом, предполагающая

- демонстрацию формы, значения и употребления грамматических конструкций и материала;
- реализацию контроля понимания;
- воспроизведение грамматических конструкций и последующую тренировку в их употреблении;
- разработана система грамматических упражнений с учетом общих и специфических требований;
- разработана методика работы по формированию грамматических механизмов французского языка для учащихся начальных классов с применением интерактивных методов, игровых и новейших технологий.

ТЕОРЕТИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ ИССЛЕДОВАНИЯ - Принимая во внимание особенности и трудности обучения грамматике французского языка в начальных классах национальной школы РА:

- уточнены цели и содержание обучения грамматике французского языка;
- выявлены типичные трудности обучения грамматике, препятствующие реализации грамматически правильной устной речи;
- разработан новый подход в обучении грамматике французского языка, который может быть перенесен на другой национальный контингент.

ПРАКТИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ ИССЛЕДОВАНИЯ - Результаты исследования могут быть использованы

- в процессе обучения французскому языку в начальных классах национальной школы;
- в курсе методики преподавания иностранных языков в вузах, на семинарских и практических занятиях, во время педагогической практики;
- при создании учебных программ, учебников, методических пособий.

АПРОБАЦИЯ ИССЛЕДОВАНИЯ - Диссертация была обсуждена на кафедре педагогики и методики преподавания иностранных языков Ереванского государственного лингвистического университета им. В.Я. Брюсова. Опытное обучение проводилось на уроках французского языка в начальных классах основной школы № 119 г. Еревана в 2011-2012 уч. году.

Основные положения диссертационного исследования отражены в статьях, опубликованных в Сборниках материалов республиканских, международных, вузовских научных конференций.

СТРУКТУРА И ОБЪЕМ РАБОТЫ - Диссертация объемом 123 страницы состоит из введения, трех глав, заключения, списка литературы и приложений. В ней содержится 11 таблиц, 5 схем, 6 диаграмм, 5 рисунков.

MARINE GAGIK HOVSEPYAN

DEVELOPING GRAMMATICAL MECHANISMS FOR ORAL COMMUNICATION
IN FRENCH IN ELEMENTARY SCHOOLS

Thesis for degree of candidate for pedagogical sciences, specialty
13.00.02 – *Methodology of Teaching and Education* (French Language).

The defense of thesis will be held at 14⁰⁰ on the 19th on June 2014, at the session of the Special Board 020 HAC to award scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan: 0010, 17 Tigran Mets, Yerevan.

SUMMARY

THE RELEVANCE OF THE RESEARCH. The teaching of foreign languages has now become a basic necessity since the foreign language proficiency contributes to the development of communication skills, intercultural understanding, perception and evaluation of the values of other cultures. The purpose of foreign language teaching is to expand intercultural communication and to develop learning skills. It is beyond doubt that without having grammar skills it is impossible to organize and develop oral and written communication according to educational standards.

Thus the relevance of the research is determined by

- the lack of the methodological researches devoted to teaching and learning French in elementary classes,
- the demand for developing grammatical mechanisms of oral communication.

THE OBJECT OF THE RESEARCH is the teaching and learning process of developing oral communication at elementary schools of the RA.

THE SUBJECT OF THE RESEARCH is the methodological system of the formation of grammatical competence of learners of French. at elementary school based of communicative skills.

THE AIM OF THE RESEARCH is to provide learners with skills of the French grammatical structures of oral communication skills at the language level **A1.1**, taking into consideration the age and individual characteristics of Armenian learners they encountered difficulties in the process of learning.

The following **objectives** are set forth to realize this aim

- to analyze the curricula, standards, requirements, textbooks applied in RA elementary schools textbooks of the RA public elementary schools,
- to overcome the difficulties emerging in French language grammar teaching process,

- to develop the methodological system of grammatical competences and skills within the scientific experiment,
- to create a set of exercises that will reduce possible interferences and will contribute acquiring the grammatical skills of oral communication,
- to test out the suggested methodological system.

THE NOVELTY OF THE RESEARCH. An attempt has been made to suggest a new methodological system of French grammar teaching techniques in elementary classes. It implies

- clarifying the aim of teaching grammar,
- reviewing the content in the early stages of study on the basis of minimization principle and the modeling of the grammar material,
- developing a methodological system of productive grammatical skills in the process of teaching grammar,
- forming the grammatical competence as a basis of oral communication by using interactive methods and strategies, games and modern technologies.

THE THEORETICAL VALUE OF THE RESEARCH. Taking into account the French grammar teaching peculiarities and difficulties in elementary schools of the Republic of Armenia:

- the French grammar objectives and teaching content have been expounded in an explicated way;
- the difficulties hindering the development of grammatically competent communication have been revealed;
- grammar teaching theoretical principles have been proposed to serve as basis for teaching other foreign languages.

THE PRACTICAL VALUE OF THE RESEARCH. The findings encompassed in the research could:

- be applied for teaching French in elementary classes of national schools;
- be used in the foreign language methodology courses and seminars at higher educational institutions;
- be incorporated within new curricula, textbooks, and methodological manuals.

THE STRUCTURE AND VOLUME OF THE RESEARCH SUBMITTED. The dissertation consists of the Introduction, three Chapters, Conclusions, References, Bibliography, Appendices, 11 Tables, 5 Figures, 6 Diagrams, 5 Images.